Հիմնավորում

Մասիս համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի «2025 թվականի բյուջեն հաստատելու մասին թիվ 370-Ն որոշմանը կից 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հավելվածներում փոփոխություններ կատարելու մասին» որոշման ընդունման

1. **Մասիս համայնքի 2025 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը**

Մասիս համայնքի 2025 թվականի բյուջեի եկամտային և ծախսային մասերի փոփոխությունը պայմանավորված է հետևյալով՝

Առկա խնդիրների նկարագրությունը

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հուլիսի 15-ի թիվ 1169-Ն և հիմք ընդունելով կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 2060-Ն որոշումները, 30 ապրիլի 2025 թվականի թիվ 25/1238-12001/1-Մ պայմանագրի 1"1 կետի միջոցներն ավելացնել 28 152 894 դրամով:

Համակարգչային ծառայությունների բարելավման, ինչպես նաև հաշվապահական հաշվառումն ամբողջությամբ ՀԾ-հաշվապահ ծրագրով վարելու համար անհրաժեշտ է համակարգչային ծառայությունների համար նախատեսված միջոցներն ավելացնել 400,0 հազար դրամով:

2025 թվականի բյուջեում այլ կոմունալ ծառայությունների համար նախատեսված միջոցները սպառվել են, սակայն բնակիչների կողմից առկա են բազմաթիվ դիմումներ, որոնց պետք է ընթացք տրվի: Առաջարկվում է բյուջեում այլ կոմունալ ծառայությունների համար նախատեսված միջոցներն ավելացնել 5 000,0 հազար դրամով:

Օգոստոս ամսին անցկացվելու է Մասիսի համայնքապետի շախմատի սուպեր գավաթ 2025 մրցաշարը, որի ավարտին լավագույն խաղ ցուցաբերած մասնակիցները կպարգևատրվեն: Անհրաժեշտ է բյուջեում նախատեսված սպորտային նպաստներն ավելացնել 1 100,0 հազար դրամով:

Մասիս համայնքի մսուր մանկապարտեզներում ավարտական խմբերի երեխաներին հեքիաթ-գրքեր նվիրելու համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսել 576,0 հազար դրամ:

Մասիս համայնքի masiscity.am կայք էջի անխափան աշխատանքի համար ձեռք բերված սերվերի լիարժեք աշխատանքը կազմակերպելու համար անհրաժեշտ է ձեռք բերել Windows 2025 server ծրագիրը, որի համար բյուջեում 500,0 հազար դրամ է անհրաժեշտ նախատեսել:

Համաձայն ԱՎԴ/0133/02/25 դատական ակտի անհրաժեշտ է բյուջեում նախատեսել 3 868,2 հազար դրամ, դատական ակտն ամբողջությամբ կատարելու համար:

ԱՎԴ2/2282/02/19 քաղաքացիական գործով վճիռը մտել է օրինական ուժի մեջ, որի կատարման համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսել 26 641,63 հազար դրամ:

Նախորդ տարիներին ձեռք բերված նախագծանախահաշվային փաստաթղթերով կապիտալ աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսել"

- Մասիս Կայարան թիվ 24 շենքի տանիքի հիմնանորոգում և բակի բարեկարգում՝ 20 815,0 հազար դրամ
- Մասիս քաղաքի Նոր թաղամաս թիվ 17 և 18 շենքերի միջև գտնվող բակի բարեկարգում՝ 12 744,0 հազար դրամ
- Մասիս համայնքի Հայանիստ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրի մասնակի վերանորոգում և ջեռուցման համակարգի անցկացում՝ 10 166,0 հազար դրամ
- Դարբնիկ բնակավայրում Ժ. Եսայանի անվան փողոցում այգու բարեկարգում՝ 9 463,0 հազար դրամ

Մասիս քաղաքի Ա. Բաբաջանյանի անվան երաժշտական դպրոցում ներկա պահին կատարվում է պատուհանների փոխարինման աշխատանքներ, սակայն նախագծով մուտքի փայտյա դռան փոխարինում նորով նախատեսված չի եղել: Առաջարկվում է պայմանագրի գնի 10 տոկոսի /590,0 հազար դրամ/ չափով գումար ավելացնել մուտքի դռան փոխարինումը ևս ներառելու համար:

2025-2026թթ կապիտալ աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ է ձեռք բերել հետևյալ նախագծանախահաշվային աշխատանքները.

- Մասիս քաղաքի կենտրոնական հրապարակում զբոսայգու կառուցման նախագծանախահաշվային աշխատանքներ և պարզ փորձաքննություն՝ 6 600,0 հազար դրամ
- Այնթապ բնակավայրում 300 տեղանոց մշակույթի տան կառուցման, վերանախագծման, լրամշակման և վերահաշվարկի նախագծանախահաշվային խորհրդատվական ծառայություններ և քաղաքաշինական պարզ փորձաքննություն՝ 8 520,0 հազար դրամ
- Հովտաշատ բնակավայրի մանկապարտեզի մետաղական ցանկապատի կառուցման, խաղային ատրակցիոնների տեղադրման նախագծանախահաշվային աշխատանքներ և պարզ փորձաքննություն՝ 660,0 հազար դրամ
- Հովտաշատ բնակավայրում համայնքային տարածքի բարեկարգման, նոր զրուցարանների տեղադրման, ոռոգման ցանցի կառուցման նախագծանախահաշվային աշխատանքներ և փորձաքննություն՝ 330,0 հազար դրամ:
- Մասիս քաղաքի 3-րդ թ/մ 4-րդ շենքի հարակից տարածքում այգու բարեկարգման նախագծանախահաշվային աշխատանքներ և պարզ փորձաքննություն՝580,0 հազար դրամ:

Համայնքապետարանի աշխատակազմի, ինչպես նաև վարչական նստավայրերում գույքի ձեռք բերման համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսել 2 000,0 հազար դրամ:

ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտն ընդունելու դեպքում համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի նվազեցումների և ավելացումների /հազար դրամներով/

h/h	բաժին	խումբ	դաս	Գործառական դասակարգում, նպատակ	հոդված	Վարչական մասի եկամուտներ	Վարչական մասի Ծախսեր	Ֆոնդային մասի Ծախսեր
				Եկամուտներ				
1				Այլ եկամուտ /ընթացիկ դրամաշնորհ/		28 152,894		
				Ծախսեր				
2	**01**	**1**	**1**	**Օրենսդիր և գործադիր մարմիններ.** համակարգչային ծառայություններ	4232		400,0	
3				Պարտադիր վճարներ	4823		1 362,0	
4				Հայանիստ բնակավայրի վարչական շենքի մասնակի վերանորոգման և ջեռուցման համակարգի անցկացման աշխատանքներ	5113			10 166,0
5				Հայանիստի վարչական շենքի հիմնանորոգման և տանիքի վերանորոգման աշխատանքներ /համաձայն դատական ակտի/	5113			2 506,2
6				Գույքի ձեռք բերում	5122			2 000,0
7	**01**	**6**	**1**	**Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ.** Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239		-21 938,0	
8				Վարչական սարքավորումներ	5122			-88 615,83
9				Ոչ նյութական ակտիվներ	5132			500,0
10	**05**	**1**	**1**	**Աղբահանում.** Սուբսիդիա	4511		5 000,0	
11	**06**	**1**	**1**	**Բնակարանային շինարարություն.** Մ/Կ թիվ 24 շենքի բակի բարեկարգում և տանիքի հիմնանորոգում	5113			20 815,0
12				Մասիս քաղաքի Ն/թ թիվ 17 և 18 շենքերի միջև գտնվող բակի բարեկարգում	5113			12 744,0
13	**08**	**1**	**1**	**Հանգստի և սպորտի ծառայություններ.** Սպորտային նպաստ	4727		1 100,0	
14				Դարբնիկ բնակավայրի Ժ. Եսայանի անվան փողոցում այգու բարեկարգման աշխատանքներ	5113			9 463,0
15				Նախագծանախահաշվային աշխատանքներ. Մասիս քաղաքի 3-րդ թ/մ 4-րդ շենքին հարակից տարածքում այգու բարեկարգման	5134			500,0
16				փորձաքննություն	5134			80,0
17				Նախագծանախահաշվային աշխատանքներ. Մասիս քաղաքի կենտրոնական հրապարակում զբոսայգու կառուցման	5134			6 000,0
18				փորձաքննություն	5134			600,0
19				Նախագծանախահաշվային աշխատանքներ. Հովտաշատ բնակավայրում զբոսայգու	5134			300,0

				բարեկարգման				
20				փորձաքննություն	5134			30,0
21	**08**	**2**	**3**	**Մշակույթի տներ.** Դատական ակտի հիման վրա բանկային երաշխիքի վերադարձ /Այնթապի մշակույթի տուն/	4823		13 500,0	
22				Այնթապ բնակավայրում 300 տեղանոց մշակույթի տան կառուցման աշխատանքներ նախորդ տարիների պարտք /դատական ակտով կատարման ենթակա/	5112			13 141,63
23				Նախագծանախահաշվային աշխատանքներ. Այնթապ բն. 300 տեղանոց մշակույթի տան կառուցման	5134			7 800,0
24				փորձաքննություն	5134			720,0
25	**09**	**1**	**1**	**Նախադպրոցական կրթություն.** Հատուկ նպատակային նյութեր /գրքեր/	4269		576,0	
26				Սուբսիդիա	4511		28 152,894	
27				Նախագծանախահաշվային աշխատանքներ. Հովտաշատ բնակավայրում մ/պ բակի բարեկարգման, ցանկապատի նորոգման	5134			600,0
28				փորձաքննություն	5134			60,0
29	**09**	**5**	**1**	**Արտադպրոցական դասիարակություն**" Մասիս քաղաքի Ա. Բաբաջանյանի անվան երաժշտական դպրոցի պատուհանների փոխարինում /լրացուցիչ մաս/	5113			590,0
				Ընդամենը		***28 152,894***	***28 152,894***	***0,0***

Բյուջեի փոփոխությունների արդյունքում վարչական մասի եկամուտները և ծախսերը կավելանան 28 152 894 դրամով:

ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ա. ԿՈՍՏԱՆՅԱՆ